

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Հարություն ԱԶԳԱԼԴՅԱՆ
ԵՊՀ միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. Եվրասիական տնտեսական միություն, Մաքսային միություն,
տնտեսական ինտեգրացիա

Եթե գնահատելու լինենք Եվրասիական տնտեսական միության աշխատանքի արդյունավետությունը առաջնահերթ անհրաժեշտ է, որպեսզի քննարկենք Մաքսային միության աշխատանքի արդյունավետությունը, որի իրավահաջորդն է հանդիսանում տնտեսական միությունը: Եթե ուսումնասիրեն տնտեսական միության անդամ երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները, ապա կարող ենք ասել, որ միության գործունեության առաջին տարիները բավական հուսադրող են:

Ստեղծումից հետո եկող առաջին տարում (2011 թվական) անդամ երկրների միջև առևտուրը աճել է ավելի քան 3 անգամ: Հավելաճը կազմել էր 33.9%: Այս ցուցանիշը նույնիսկ ավել էր քան 3-րդ երկրների հետ գրանցած առևտրի ցուցանիշը:

2012 թվականին աճի ցուցանիշը այսքան տպավորիչ չէր, սակայն այդ տարի ևս այն ավելի բարձր էր քան 3-րդ երկրների հետ գրանցած ցուցանիշը (համապատասխանաբար 8.7 % և 3.2%): Սակայն 2013 թվականին այս դինամիկական չհաջողվեց պահպանել: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալներով այդ տարի միության մեջ մտնող երկրների միջև առևտուրը կրճատվել է 6.4 տոկոսով, մինչդեռ երրորդ երկրների հետ՝ ընդամենը 1.8 տոկոսով: Այն առավել ակներև պատկերված է Ադյուսակ 1-ում:

Մաքսային Միության ստեղծումը առաջին տարվա ընթացքում ամենաշատ դրական ազդեցությունը թողեց Բելառուսի վրա, որն արտահայտվեց Բելառուսից Ռուսաստան և Ղազախստան արտահանման ծավալների աճով, ինչպես նաև ավելի քան 5 անգամ աճեց նաև ներմուծումը Ղազախստանից:

Աղյուսակ 1. 2010-2013 թվականներին Մաքսային Միության (այժմ Եվրասիական Տնտեսական Միություն) երկրների արտաքին և ներքին առևտրի հիմնական ցուցանիշների աճի տեմպերը տոկոսներով նախորդ տարիների հետ համեմատած:


Առևտրի ուղղությունները		2010	2011	2012	2013
Ռուսաստանի Դաշնություն					
Արտահանում	Դեպի ԵԱՏՄ երկրներ	118.7	132.9	109.0	88.3
	Դեպի երրորդ երկրներ	133.5	129.9	101.4	98.7
Ներմուծում	ԵԱՏՄ երկրներից	...	137.2	104.3	104.9
	Երրորդ երկրներից	136.7	132.6	103.1	102.9
Բելառուսի Հանրապետություն					
Արտահանում	Դեպի ԵԱՏՄ երկրներ	148.2	145.7	112.7	104.8
	Դեպի երրորդ երկրներ	104.3	176.5	110.3	62.3
Ներմուծում	ԵԱՏՄ երկրներից	...	137.3	108.0	75.6
	Երրորդ երկրներից	137.8	124.2	93.0	113.8
Ղազախստանի Հանրապետություն					
Արտահանում	Դեպի ԵԱՏՄ երկրներ	166.6	118.4	87.6	102.9
	Դեպի երրորդ երկրներ	137.1	148.3	99.7	92.1
Ներմուծում	ԵԱՏՄ երկրներից	...	123.5	110.5	112.3
	Երրորդ երկրներից	95.2	115.9	135.8	107.5
ԵԱՏՄ ընդհանուր					
Արտահանում	Դեպի ԵԱՏՄ երկրներ	129.1	133.9	107.5	93.6
	Դեպի երրորդ երկրներ	132.6	133.7	101.5	95.3
Ներմուծում	ԵԱՏՄ երկրներից	129.1	133.9	107.5	93.6
	Երրորդ երկրներից	132.6	130.9	104.6	103.8

Աղբյուրը՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի պաշտոնական կայք (թվային ցուցանիշները ներկայացված են մլդ. դոլար մեծությամբ)
http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/trade/Pages/default.aspx.

Այսպես, 2010 թվականին Ղազախստանից ներմուծման կտրուկ աճը պայմանավորված էր Բելառուս ներմուծվող մագուրի ծավալների ավելացմամբ: Ղազախստան վառելիքաէներգետիկ հումքը ներմուծվում էր Բելառուս, քանի որ Ռուսաստանի հետ դեռ որոշված չէր արտահանման մասին գանձվող մաքսատուրքերի դրույքաչափերի հարցը: Ավելի ուշ, երբ կասեցվեցին նավթահումքային ռեսուրսների վրա դրված արտահանման մաքսերը, Բելառուսում զգալիորեն աճեց Ռուսաստանից նավթամթերքի ներմուծումը՝ տրանսպորտային և ենթակառուցվածքային արդյունավետությունից ելնելով: Սակայն դա էլ իր հերթին բերեց Ղազախստանից եկող նավթամթերքի ծավալների կրճատմանը:

Երրորդ երկրներ արտահանվող ապրանքների այսպիսի մեծ աճը հիմնականում պայմանավորված էր այնպիսի ապրանքների առաքումների ավելացմամբ, ինչպիսին են տարբեր լուծիչ հեղուկները, քսայուղերը, որոնց արտահանման մաքսը ռուսական բյուջե չէր փոխանցվում, ի տարբերություն «հունքային նավթամթերքի»: Եվ Բելառուսը սկսեց Ռուսաստանից նավթամթերքի անվան տակ մի մի շարք արտադրանքներ ներմուծել իր երկիր: Այսպիսի պայմաններում բելառուսական նավթավերամշակման արտադրամասերը սկսեցին մեծ թափով աշխատել և բավական օգուտներ բերեցին երկրին:

Հաշվի առնելով 2012 թվականի իրենց բյուջե չմտնող գումարները, Ռուսաստանը 2012 թվականին բանակցություններ սկսեց Բելառուսի հետ, և վերը նշված ներմուծման մեխանիզմը դադարեցվեց: Դրա արդյունքում 2012 թվականի օգոստոսից Բելառուսական արտահանումը երրորդ երկրներ սկսեց նվազել:



Գծապատկեր 1. Բելառուսի արտահանման դինամիկան (մլրդ դոլար)

Աղբյուրը՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի պաշտոնական կայք (http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/trade/Pages/default.aspx).

Այսպես օրինակ, 2013 թվականի առաջին կիսամյակի տվյալներով Ռուսաստանից Բելառուս նավթամթերքի ներմուծումը կրճատվել էր 99.1 տոկոսով, իսկ ընդհանուր ներմուծումը՝ մոտ 25 տոկոսով:

Միևնույն ժամանակ էլ «այլ ածխաջրածիններ» ապրանքային խմբի արտահանումը Բելառուսից Ռուսաստան աճել էր 8.3 անգամ:

Այսպիսով, 2012 թվականի երկրորդ կեսից արդեն Մաքսային Միության ստեղծած առևտրային «բում»-ին, որը հիմնված էր նավթամթերքի՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ծավալների ավելցանման հետ, փոխարինելու եկավ Բելառուսի կարողությունը վերանշակել ածխաջրածնային հումքը և վերավաճառել երրորդ երկրներ:

Ի տարբերություն Բելառուսի, Ռուսաստանը և Ղազախստանը այդքան շատ չզգացին իրենց վրա Մաքսային Միության դրական կողմերը: Ռուսաստանի արտահանումը դեպի Մաքսային Միության (ԵԱՏՄ) երկրներ սկսեց դրական դինամիկա ցույց տալ միայն 2011 թվականին, հիմնականում դեպի Բելառուս հանքահումքային ռեսուրսների արտահանման շնորհիվ: 2011-2012 թվականներին արտահանումը դեպի Մաքսային Միության երկրներ աճում էր ավելի շատ քան դեպի երրորդ երկրներ, սակայն աճի այդ տեմպը թույլ չէր տալիս 100 տոկոսով խոսել «առևտրի ստեղծման» մասին:

Աղուսյակ 2-ում բերված են Մաքսային Միության (ԵԱՏՄ) երկրների միջև առևտրի դինամիկան ըստ ապրանքատեսակների, որն էլ թույլ է տալիս հաշվարկել մրցակցային այն առավելությունները, որոնք ունեն երկրները տարբեր ապրանքների արտահանման և ներմուծման բնագավառում: Թվային տվյալները ներկայացված են մլդ. դոլար գումարային մեծությամբ:

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, միակ կայուն աճ ցույց տվող ապրանքախումբը տնտեսական և գյուղատնտեսական ապրանքներն են: Կրտուկ իջել է նաև հանքահումքային ապրանքների տեսակարար կշիռը: Պատճառը կապված էր Ռուսաստանից Բելառուս 2010 թվականին շատ մեծ թվաքանակի ներմուծման հետ, որի պատճառը նկարագրված էր ստորև:

Ընդհանուր առևտրի այդ անկումը մի քանի պատճառներ ուներ: Առաջին հերթին սպառվեց հետինտեզրացիոն «բում»-ը, որը տեղի ունի բոլոր նոր ինտեզրացիոն խմբավորումներ մտած երկրների համար, սակայն դա միայն կարճաժամկետ երևույթ է, և երկարաժամկետ հատվածում այդքան մեծ ազդեցություն չունի:


Աղյուսակ 2. Մաքսային Միության երկրների միջև առևտրի աճի տեմպերը ըստ ապրանքատեսակների:

	2011	2012	2013
Ընդհանուր արտահանում	133.9	107.5	93.6
Տնտեսական և գյուղատնտեսական ապրանքներ (բացառությամբ տեքստիլի)	117.6	120.5	119.4
Հանքահումքային ապրանքներ	140.1	101.1	76.8
Քիմիական արդյունաբերության արտադրանք, կաուչուկ	120.6	106.8	106.7
Կաշվից իրեր	136.7	176.6	159.0
Փայտամթերք	115.6	98.4	100.2
Տեքստիլ, կոշիկ	121.1	113.3	149.3
Մետաղներ և մետաղե կոնստրուկցիաներ	117.1	102.3	105.6
Մեքենաներ և սարքավորումներ	162.1	113.1	93.4


Աղբյուրը՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի պաշտոնական կայք (http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/trade/Pages/default.aspx) .

Հետաքրքրական է նաև մեկ այլ փաստ: Մաքսային Միության (հետագայում նաև ԵԱՏՄ) կազմավորումը չբերեց Ռուսաստանի առևտրի աշխարհագրության էական փոփոխությանը, մինչդեռ Բելառուսի արտահանման կառուցվածքը անընդհատ փոփոխվում էր՝ կապված երրորդ երկրներ վերանշակված նավթի արտահանման ծավալների ավելացման հետ:


Իսկ ահա Ղազախստանի արտահանման և ներմուծման մեջ ընդհանրապես նկատվում է Բելառուսի և Ռուսաստանի չափաբաժնի իջեցում: Կարելի է ասել, որ առևտրի աշխարհագրության մեջ կատարված հիմնական փոփոխությունները վերաբերվում էին հետևյալին՝ աճեց Բելառուսի կշռի ավելացումը Ռուսաստանի ներմուծման մեջ (4.3 տոկոսից 2010 թվականին, մինչև 5.4 տոկոս 2013 թվականին):



Գծապատկեր 4. Մաքսային Միության երկրների տեսակարար կշիռը Ռուսաստանի արտահանման մեջ (տոկոսներով)



Գծապատկեր 5. Մաքսային Միության երկրների տեսակարար կշիռը Ղազախստանի արտահանման մեջ (տոկոսներով)



Գծապատկեր 6. Մաքսային Միության երկրների տեսակարար կշիռը Ղազախստանի արտահանման մեջ (տոկոսներով)

Աղբյուրը՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի պաշտոնական կայք (http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/trade/Pages/default.aspx).

Այսպիսով, Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև առևտրային հարաբերությունների զարգացումը միասնական մաքսային միության մեջ բավական տարբեր զարգացումներ է ստանում: Միության գոյության առաջին երկու տարվա ընթացքում անդամ երկրների տնտեսությունների վրա զգացվում էր դրական զարգացում, որը սակայն տեղի էր ունենում տնտեսության աճի էքստենսիվ գործոնների կիրառմամբ: 2013 թվականին միության ներսում առևտրի ծավալները կրճատվեցին:

Ընդհանուր առմամբ, Մաքսային Միությանը անդամակցությունը առայժմ որևէ լուրջ ազդեցություն չի ունեցել անդամ երկրների առևտրի վրա:

Սակայն Մաքսային Միությունը ազդում է ոչ միայն առևտրի ծավալների վրա, այլ նաև ներդրումների: Այժմ ուսումնասիրենք, թե ինչպիսի տեսք ունեն ներդրումները Մաքսային Միության անդամ երկրների մոտ:

Ներդրումների ազատ տեղաշարժի ապահովումը հանդիսանում է եվրասիական ընդհանուր տնտեսական տարածքի հիմնադրման անկյունաքարերից մեկը: Սակայն նրա մասին շատ քիչ է հիշատակվում Միասնական

տնտեսական տարածքի մասին համաձայնագրում, որը ուժի մեջ է մտել 2012 թվականի սկզբից:

Չնայած այն հանգամանքին, որ վիճակագրությունը ցույց է տալիս ներդրումների ծավալների որոշակի աճ, մեկ է դժվար է պնդել, որ Մաքսային Միության ստեղծումը դրական, շարժիչ ուժ է հանդիսացել ներդրումների ծավալների ավելացման համար:

Ավելին, այն ունեցել է նաև բացասական կողմեր: Օրինակ, Մաքսային Միության համար շատ մեծ նարտահրավեր էր այն փաստը, որ միության անդամ երկրների միջև սկսվեց պայքար ավելի շատ ներդրումներ բերելու իրենց երկիր: Քանի որ ՄՄ ստեղծումը իր հետ բերել էր կապիտալի ազատ տեղաշարժի հնարավորություն, իսկ երկրների միջև առկա էր բիզնեսը վարելու միջավայրերի տարբերություն, ապա շատ ռուսական ընկերություններ, հիմնականում երկրի կենտրոնական հատվածից, իրենց արտադրությունները տեղափոխեցին հարևան Ղազախստանի տարածք:¹

Բիզնեսը «արտագաղթում էր» ոչ միայն Ղազախստան, այլ նաև Բելառուս, հիմնականում դեպի բելառուսական «Սկոլկովո» որտեղ առկա են տեխնոպարկեր և հատուկ ռեժիմով տնտեսական գոտիներ, որոնք ավելի գրավիչ պայմաններ են առաջարկում գործունեություն ծավալելու համար:

Եվս մեկ փաստ է անհրաժեշտ հաշվի առնել, որ նաև երրորդ երկրներից եկող ներդրողները կարող են ազատորեն փոխել իրենց գործունեության վայրը: Հատկապես եթե հաշվի առնենք այդ երկրների դիրքը հեղինակավոր www.doingbusiness.org կայքի վարկանիշային աղյուսակում: Այսպես, 2015 թվականին գործունեություն ծավալելու վարկանիշային աղյուսակում Ռուսաստանը զբաղեցնում է 62-րդ, Բելառուսը 57-րդ, Ղազախստանը 77-րդ տեղը: Հատկանշական է, որ Հայաստանի հանրապետությունը այս ցուցանիշով աշխարհում 45-րդն է, այսինքն Հայաստանի բիզնես միջավայրը ավելի գրավիչ է, քան մնացած 3 երկրներից:

Այժմ դիտարկենք Մաքսային Միության (ԵԱՏՄ) երկրների հետ Հայաստանի հարաբերությունները՝ առևտրատնտեսական հարաբերությունների տեսակետից:

Հայաստանի և Բելառուսի միջև 2013թ.-ին իրականացվել է 40,299.1 հազար դոլլարի, իսկ 2014թ.-ին՝ 49,436.4 հազար դոլլարի ապրանքաշրջա-

¹ Libman A., Ushkalova D. Foreign Trade Effects of the Customs Union between Belarus, Kazakhstan, and Russia // Central Asia Economic Paper. May 2013. No.8. Elliott School of International Affairs, the George Washington University.

նառություն, որը կազմում է ՀՀ ողջ առևտրաշրջանառության համապատասխանաբար 0,7 և 0,8 %-ը: Չնայած որ տարեց տարի երկրների միջև ապրանքաշրջանառությունը աճ է գրանցում, այդուամենայնիվ, երկու երկրների համագործակցության ողջ պոտենցիալը չի իրացվում:

2012թ.-ին Հայաստանից դեպի Բելառուս արտահանվել է 6,710.3 հազար դոլլարի ապրանք, իսկ 2013թ.-ին 8,561.6 հազար դոլլարի ապրանք, աճի տեմպը կազմել է 127.6%:

Ներմուծման տեսանկյունից պատկերն այլ է: Ներմուծման ծավալները կազմում են 2012-2013թթ.-ի համար համապատասխանաբար 23,772.6 և 30,755.0 հազար դոլլար, իսկ աճի տեմպը կազմել է 129.4%:

ՀՀ-ից դեպի Բելառուս արտահանման ծավալները կազմում են ՀՀ ողջ արտահանման 0,6%-ը, իսկ ներմուծման՝ 0,7%-ը:

Ռուսաստանի հետ Հայաստանն ունի ամենասերտ տնտեսական հարաբերությունները այս երկրների միջից: Միայն 2013 թվականին Ռուսաստանի հետ առևտրաշրջանառությունը կազմել է մոտ 1,445.400 հազար ԱՄՆ դոլար, ինչը կազմում է ամբողջ ԱՊՀ-ի հետ առևտրաշրջանառության ավելի քան 80 տոկոսը, և ընդհանուր առևտրաշրջանառության մոտ 25 տոկոսը: Սակայն հաշվի առնելով 2014 թվականի արտարժույթի նկատմամբ ռուբլու դրսևորած վարքը, այս տեսակետից բավականաչափ փոփոխություններ են սպասվում երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններում: Մաքսային Միության (Այժմ ԵԱՏՄ) անդամ Ղազախստանի հետ առկա են գրեթե զրոյական հարաբերություններ, սակայն ինտեգրման հետագա գործընթացում հնարավոր տնտեսական պոտենցիալի բավական չիրացված հնարավորություններ են առկա:

Հարություն ԱԶԳԱԼԴՅԱՆ

Սաքսային Միության (Եվրասիական տնտեսական միության) գործունեության արդյունքները և հեռանկարները

Բանալի բառեր. Եվրասիական Տնտեսական Միություն, Սաքսային Միություն, տնտեսական ինտեգրացիա

Եվրասիական Տնտեսական Միությունը տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթաց է, որը գտնվում է տնտեսաքաղաքական զարգացման փուլում: Աշխատանքում ուսումնասիրվել է ԵԱՏՄ անդամ պետությունների կարևոր մակրոտնտեսական ցուցանիշները: Ուսումնասիրվել է նաև Հայաստանի Հանրապետության առկա տնտեսական կապերը միության անդամ երկրների հետ և մատնանշվել դրանցում առկա հարաբերական առավելությունները:

Арутюн АЗГАЛДЯН

Деятельность и перспективы Таможенного союза (Евразийского экономического союза)

Ключевые слова: Евразийский Экономический Союз, Таможенный Союз, экономическая интеграция

Евразийский экономический союз является региональным интеграционным процессом, который находится в процессе экономического и политического развития. Эта статья посвящена наиболее важным макроэкономическим показателям процесса интеграции ЕАЭС. Исследовано также экономические связи Армении с государствами-членами ЕАЭС и относительные экономические преимущества Республики Армения.

Harutyun AZGALDYAN

Activities and prospects of Customs Union (Eurasian Economic Union)

Key words: Eurasian Economic Union, Custom Union, economic integration

Eurasian Economic Union is the regional integration process, which is in the process of economic and political development. This article focuses on the most important macroeconomic indicators of the integration process EAEU. It is focused also on economic relations between member-states of EAEU and the Republic of Armenia and the relative economic advantages of Armenia.